

ի վեր պետական (կալվինական) եկեղեցու հետ մրասին գոյութիւն ունի և որի գլխաւոր կազմակերպութիւն տուողը եղել է անտուանի աստուածաբան Ալեքսանդր Վինեն բաւական ժամանակ խաղաղ ընթացք ունենալուց յետոյ, յարուցել է կրկին հին վէճը իւր հարեանի հետ։ Այս վէճին առիթ է եղել մասամբ ոմն պատոր Թիֆտամայէրի բրոշները, որ գաղափարական գոյներով նկարագրում է եկեղեցու ազատութիւնը և նորինոր թուում այն չարկիները, որոնք յառաջ են գալիս եկեղեցին պետական կարգերի հետ կապելուց։ Ենօպիսով թէ նրա և թէ հակառակորդների գրաւածների մէջ արծարծուում է կրկին մի ընդհանուր խնդիր։ որ կմնդանի է նաև Անգլիայում ու գրեթէ բոլոր Ներոպայուում և որի լուծման վերայ գուցէ գեռ ամրող սերունդներ աշխատեն։ Պէտք է արգեօք եկեղեցին բոլորովին բաժանել պետութիւնից։ Խնչակէս յայտնի է այդ խնդիրն արդէն լուծուած է Ամերիկայուում։ ուր եկեղեցին պետութիւնից բոլորովին անկախ մարմնն է և շարունակում է սակայն առաջուայ համեմատութեամբ հսկայական քայլերով առաջ գնալ։

ԱՄԵՐԻԿԱ-

Ամերիկայի Առնգրեգատիոնալիստ եկեղեցիները
որոշել են նորեք մի պատգամաւորութիւն ուղարկել
Ճաղանձիա, տեղն ու տեղը քննելու այն խնդիրները,
որոնք հետեւանք են քրիստոնէութեան զարգանա-
լուն այս երկրում: Խնչակէս որ առհասարակ Ճաղո-
նացիք երկար ժամանակ եւրոպական և ամերիկա-
կան համալսարաններ յաճախելով և արդի գիտու-
թեան ու արուեստի արդինքը սեփականելով՝ քա-
ղաքակրթութեան մէջ այժմ անկախ գիրք բռնել են
աշխատում: Այնակէս և նոցա սակաւաթիւ քրիստոն-
եաները ձգտում են ցցց տալիս իրենց համար առ-
անձնն, միսիոնարներից անկախ եկեղեցի կազմա-
կերպելու և առանց նոցա օգնութեան քրիստոնէու-
թիւնը տարածելու իրենց երկրի մէջ: Եյդ վերո-
յիշեալ պատգամաւորութեան նպատակն է տեսնել՝
արդեօք նոքա այնշափ հասունութիւն ունին, որ
կարողանան անկախ կերպով դլուխ պահել և այնպիսի
մի մէծ ու նշանաւոր դործ յառաջ տանել, ինչպի-
սին է ամրող մի նոր ժողովրդի քրիստոնէայ գարձ-
նելու:

U.S. LNU.

Այս տարուայ Պրեսբիտէրիանների ժողովը
Նիւկասատլում որոշել է Լուսունի, աստուածաբանա-
կան ֆակուլտէտը Կէմրիիջ փոխադրել այն նպատակով,
որ ուսանողները միջոց ունենան առհասարակ գի-
տութեան բոլոր ճիւղերից օգտուելու և երկու Անդ-

Հուհիք, որոնք յայտնի են արդէն Սիսա Երան մենաստանում գտած ո. Գլբի մի նշանաւոր ձեռագրով, նուիրել են նոր փակուլտետի համար կառուցանելի շենքի տեղը և 5000 ֆունտ դրամ չի նութեան համար:



ԵԿԵՂԵՑՎԱՆԻ ՄԱՄՈՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՄՈՀԱՅԵԱՆԿԱՆՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒ
ԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ:

Ճիշդ մի տարի է ահայ որ եւրոպական մարդ զրադուած է տաճկական տէրութեան մէջ կուող քրիստոնեաների և մասնաւորապէս հայ ստոնեաների վիճակով։ Այս առաջին անդամը ակայն, որ եւրոպական մամուլը զբաղուում է խնդրով, մեր գարու ամրող պատմութեան ընդուում Տաճկաստանի քրիստոնեաների ճակատաշատ անդամ է զբաղուել Եւրոպան, որի հայացսպէս կոչուած «արևելեան խնդիրը» մի անանելի կորդեան հանգոյց է գարձել, Այս անհն եւրոպական քաղաքականութիւնն և մամուլը պուեց այդ խնդիրը կրկնին շարժել Սասնոյ գարի քստմնելի կոտորածների առթիւ։ Սասնոյ կոածից մինչեւ մեր օրերը շարունակուող հայ քըռունեից հալածանքն ունի իւր ընդարձակ պատմիւնը, որ երեկի մի օր նիւթ կը գառնայ մեր ու ստուերակողմերը զարդարելու համար։ «Արան» այդ մասին միայն պաշտօնական զեկուցագրեակարող է կարող էր խօսել, որ դիզուած են հայրապետագիւնում, սակայն զրաժամանակը չէ հասել, մենք կամենում ենք առ այժմ արձանագրել ենդ այն կարծիքներն, որ արտայայտել են օտար զեցեաց բերան համարուող թերթերը։ Թէպէտոպական և ամբիկական ամրող պարբերական ուրուլը զբաղուել է այդ խնդրով, բայց «Արարատի» ընշատնել են այդ ամենի մասին զեկուցումն տապահ գործը մեծ եռանգով և անօրինակ հաւաշխութեամբ կատարել է մեր աշխարհական մարդը, որի համար մի մեծ պարծանք պիտի լինի այդ համար շատ թանգ են այն համակրանաց ցոյը, որ արել են դէպի նահատակ հայ եկեղեցին քոյր եկեղեցիք։ Այս համակրանաց մէջ առանձ նշանակութիւն ունին այն երկու մեծ ազգերի զեցականաց ջանքերը, որոնք քաղաքական ասիդուումն ել միացած ոյժերով գործել են յօդուածուած հայ քրիստոնեից։ Պուտաց մէծազօր սրութիւնը գարուց աւելի է ահաւ, որ մահմէտաւութեան լծի տակ ճնշուող քրիստոնեաներին քով և գործով պաշտպանում է, Հայկական խնդրի

մէջ ոռուսական կառավարութեան հետ ձեռք ձեռքի
տուած հայ քրիստոնէից գատը պաշտպանել են և
անդլիացիք, Անդլիատում հասարակաց կարծիքը մը-
շակողների և հալածուած քրիստոնէից գատը վա-
րույների մէջ առաջին տեղը բանել են անդլիական ե-
կեղեցականները: Կոյսնպիսի ճշմարիտ քրիստոնէա-
կան եղանակարութեան օրինակ է ցցց տուել և
ոռուսաց եկեղեցին, որի բերան թերթը՝ «Եկեղեցվելիյ
Աւեստանիկը» միշտ զբեմէ ամեն մի համարում հայ
քրիստոնէից օգտին լունի է արել իւր ձայնը: Թէ
ինչքան մեծ նշանակութիւն և հեղինակութիւն ու-
նի այսպիսի խնդրում այդ ձայնը աւելորդ է բացատ-
րել, ուստի և մնկը աւելի մի լաւ վկայութեան
յօդուած հայկական գատի առաջ բերել չենք կարող
քան թէ այդ շարաթաթերթի Ն ՅՇ-ում հրատա-
րակուած հետեւեալ յօդուածը, որ թարգմանա-
բար զետեղում ենք այս տեղ:

• ՏԱՅԻՆՆԵՐԻ ԵՒ ՔՐՄՑՈՂՆՆԱՆԵՐԻ ԹԵՆԱՄՐՈՒԹԵԱՆ ՊԱՏ-
ՃԱՌՆԵՐԸ ՕՍՄԱՆԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՄԵջ..

2ը նայելով Տաճկաստանի բնակիչներին խաղաղացնելու համար եւրոպական քաղաքականութեան ձևոնարկած բոլոր միջոցներին, այնուեղ շարունակ Տաճկառակութիւններ են ծնում, որոնք միշտ արիւնահեղ ընդհարումներով են վերջանում: Լրագիրների մէջ հէնց այն է, որ Հաղորդում են թէ տաճիկները սպանում և խօղում են քրիստոնեաններին, թէ քրիստոնեաններն ել իրենց կողմից, ինչպէս այդ կատարուեց նորերս Մակեդոնիայում: յարձակում են տաճկական գիւղերի նվերայ և կոտրում են բնակիչներին: Այս երեսոյները կատարելապէս քրիստոնիկական բնաւորութիւն ունին և առ երեսոյն ամէնքն էլ այնքան սովորել են այդ բաներին, որ ի բաց առեալ առանձին տչքի ընկնող գէպքերից, քիչ ուշագրութիւն են գրաւում: գրանք հէնց նոյն խոկ աչքի ընկնող գէպքերումն էլ, ինչպէս օրինակ քրիստոնեանների կոտորածի ժամանակ Հայաստանում և տաճիկներինը Մակեդոնիայում: բոլոր գործընորանով է վերջանում: որ եւրոպական երկիրների զանազան նշանաւոր թէրթում զայրցը է արտայայտում: կամ թէ չէքիչ ազգեցութիւն ունեցող քաղաքական գեկուցաց գրեր են ուղղուում Բ. Դրան: որոնց նա արդէն այնպէս վարժուել է, որ գրեմէտ ամեննեին ուշք չէ գարձնում զրանց, բարձրաձայն յայտարարելով, որ խոստանում է բարենորոգումներ անել: որոնց մըտցընելու մասին ի հարկէ իսկի չէ էլ մոտածում և այս ամէնն այն յուսով, որ ժամանակն իւր անելլիքը կանէ և հետղիետէ կը սանձահարէ ամենաջերմեռանք քաղաքագէտների կռւասիրութիւնն անդամ:

Եւ յիբաւէի միշա էլ այդպէս է լինում: Երբ հասարակական զայրոյթի պայմանումը լուսում է, ամենքն էլ մոռանում են այն ժշտատ ազգերին: որոնք հեծում են խոլանմականութեան լծի տակ և թողնում են, որ նրանք իրենք վարեն իրենց գոյութեան կարւը մինչև այն ժամանակ, երբ մի նոր արիւնահեղ գէպը կրկին յառաջ բերէ մի նոր պայմանն անպառը զայրոյթների:

Նոյն իսկ մեր լուսաւորեալ դարրու վախճանին տաձկաց կայսրութեան մէջ կատարուող այսպիսի սարսափելի եղեքրեզութեանց պատճառով չետաքրքրական է տեսնել՝ թէ Բնշ է արգեօք այդ կատաղի և սարսափելի թշնամութիւնն որ կայ քրիստոնէից և տաձկաց մէջ:

Ըատերին տարօրինակ է թուռում՝ որ քրիստոնեաները շարունակ ողբում են խլամի ատելի Ծի տակ իրենց տանջանքների մասին, մինչդեռ շատերը պնդում են, թէ տաճիկ կառավարութիւնն խկապէս մի բռնակալ կառավարութիւն չէ, այլ ընդհակառակին իւր հպատակներին այնպիսի ընդարձակի ազգառութիւն է պարզեցել, որպիսին ըլ կայ նոյն իսկ եւրոպական տէրութեանց մէջ, իրենց շատ զարդացած ստիլականական վարչութեանց շնորհիւ և այսու ամենայնիւ քրիստոնեաները գարձեալ հեծում են, որովհետեւ նրանց վիճակը Տաճկաստանում անկասկած վերին աստիճանի ծանր է, և բաւ է միայն նայել Տաճկաստանի մի քանի առանձնականութիւնների վերայ իրրե երկրի և տէրութեան, որ մարդկասկանայ, թէ քրիստոնեաները երբէք կարող չեն հաշտուել իրենց վիճակի հետ և զբանց ու տաճկաց մէջ եղած ամենակատաղի թշնամութիւնն ծնում է ընսկանաբար դրանց երկուափ ընտակակցութիւնից:

Ամենից առաջ իւրաքանչիւր քրիստոնէի սիրոց
կակծում է իւր շուրջը նայելիս Տաճիկ կայ-
սրութիւնը հիմնաւել է ծաղկող քրիստոնեաց
կայսրութեանը աւերակների վերայ գեռ ևս չը
կայ մի երկիր ամբողջ աշխարհին երևսին, որ այն սոս-
կալի իշխողութիւնների գոնէ մի տասներորդը ծնեցը-
նէր, որոնք այնտեղ ամէն քայլափօնում ծնում են։
Նշանեղ կարելի է տեսնել հաղարաւոր քրիստոնեա-
կան տաճարներ, որ մզկիթների են փոխարկուել,
որոնց մէջ ամէն օր թշնամնուում և հայհոյուում է քրիստոնէութիւնը, իսկ տասնհաղարաւոր աւերակ-
ներ երբեմն ծաղկող տաճարների ծածկում են գաշ-
տերն ու ու լեռները։ Խուամի կործանիչ ձեռքը նայն
իսկ իւր հպմամբ աւերել է ոչ միայն եկեղեցիք,
այլ նաև ամբողջ քրիստոնեայ քաղաքներ և քրիս-
տոնէական քաղաքակրթութիւնը, և այդ աւերիչ ու
կործանիչ ոյժն գործում է մինչև այսօր իսկ քրիս-
տոնէից վերաբերութեամբ։ Միմայն այս հանդա-

մանքը բաւ է, որ իւրաքանչիւր քրիստոնէի երակների մէջ եռայ արիւնը, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն սառն—արհամօրհական յարաբերութիւնը, որ այս կերպ թէ այլ ցոյց է տալիս քրիստոնեաներն իւրաքանչիւր ուղղահաւատ, իրեւ ստորինս Ալլահից անիծուած ցեղի:

Տաճկաստանը, թէպէտ մահմէտական տէրութիւն է, բայց եւրոպական տէրութիւնների մէջ ընդունուած է իրեւ հաւասարազօր անդամ—միջազգային իրաւանց ընդհանուր սկզբանքներավ, որ քրիստոնէական քաղաքակրթութեան ամենագեղեցիկ պուռղն է, որ ձտում է ազգերի մէջ ընդհանուր եղբայրակցութեան սկզբանքների վերայ հիմնուած յարաբերութիւններ հաստատել, բայց Տաճկաստանը շատ ստոր երևեցաւ այս միջազգային իրաւանց պայմաններից, այնպէս որ նրա բարբարոսական յարաբերութիւնը քրիստոնէից վերաբերութեամբ զրկեց նրան այդ իրաւունքից և նա դադարեց անկախ տէրութիւն լինելուց ազգերի եղբայրակցութեան շրջանում: Ստական Տաճկաստանը օգտուելով քրիստոնեայ տէրութիւնների բարեացակամութիւնից և խաղաղասիրութիւնից աշկարայ կերպիւ խարերայութեան և ստափութեան այնպիսի քաղաքականութիւնն է բանեցնում, որին ընդունակ է միայն որ և է ասիական տէրութիւն:

Հարունակ խախտելով միջազգային իրաւունքները, նա զեկավարուում է ամենաբարբարոս եսականութեամբ, երկերեսանի քաղաքականութիւնը քաղաքակիտութեան մեծագոյն արուեստն համարելով: Արև հետ միասին նա չէ պահպանում, չէ հաստատում արդարութիւնն իւր սահմաններումն: Նուուի մի բաւական լաւ օրէնսդիրք, սակայն ոչ որ դրա վերայ ուշադրութիւն իսկ չէ դարձնում: Ամէն տեղ և ամէն բանի մէջ իշխում է կոպիտ ոյժը, որ սկսելով հարեմի բանակալական քմահաճոյքներից, երբեմն հասնում է մինչև հայկական կոտորածների սարսափներին: Բանտերն և բանտային վարչութիւններն այնուեղ վերին աստիճանի անպէտք են: Տէրութեաններեւութքը միշտ խանդարուած է և առարկայ բոլոր առևտրական աշխարհի զարմանքի: Իրաւունքն ու արդարագտառութիւնը գնուում են և վաճառուում նոյնպիսի համարձակութեամբ ինչպէս միւս ապրանքները շուկայում: Քայլ անդամ չէ կարելի անել առանց ամենազօր բախչի չուզ սպառազինուելու: Մինչև անդամ բարձրագոյն պաշտօնեաներն էլ այդ վերաբերութեամբ անման չեն, և զիտեն ճարպիկութեամբ քրիստոնեաններից բախչիշներ առնել ամենատեսակ պատրուակներով: Մի քարոզիւ Սիւրեայում շատ ուրախ եղաւ, երբ բաղմաթիւ խոչընդուաներից յետոց բախչիշների միջոցով

նշանաւոր արտօնութիւններ ստացաւ ազատ ապրելու և գործելու տաճկաց սահմաններում, սակայն նրա ուրախութիւնը սառեցաւ այն պաշտօնէի նկատողութեամբ, որ թուղթը յանձնեց նրան, ասելով թէ և այդ արտօնութիւնները տրուած են նրան և Պոլսում, բայց ոչ ոք կարող չէ երաշխաւոր մնել, որ այդ կը ճանաչեն Դամասկոսում: Այդպէս էլ ապա կատարուեց, Բայցի զրանից գաւառական պաշտօնեանները մեծ չափով գործ են գնում և խալիչի տակը դնելու և լազարի վերաբերութեամբ, այնպէս որ նոյն իսկ սուլթանի հրամանագրերը (հարկաւ ոչ առանց նրա լուելեայն համաձայնութեան) նոյն վիճակին են ենթարկուում, մանաւանդ երբ գործը վերաբերում է բոլոր ուղղահաւատների համար ատելի քրիստոնեանների իրաւունքներին և արտօնութիւններին:

Ամէնքին յայտնի է Տաճկաստանի նենդութիւնը գաշմներ կուելու ժամանակ, նրա ասիական կեղծաւորութիւնն իւր վրայ առած պարտականութիւնները կատարելու ժամանակ, նրա յանդդնութիւնն այն գաշմների խախտմանց գործում, որոնցից կարելի չէ խուսափել—այս ամէնը կազմում են մի խայտառակ պատմութիւն, որ արժանի է որ և է բարբարոս դարու: Նոյն իսկ նրա գոյութիւնը իրեւ անկախ տէրութիւն, այն պայմանով է ընդունուած, որ նա խոստումն է տուել իւր բոլոր հպատակներին օրէնքի առաջ հաւասար իրաւունք տալու, առանց ուշք գարձնելու ցեղի և կրօնի տարբերութեան, բարենորոգութմներ մտցնելու, որոնք մի քիչ գոնէ ապահով էին հպատակների խաղաղ կեցութիւնը: Բայց այն սարսափները որ կատարուեցան Աբրանանում, Բոլղարիայում, Եգիպտոսում և Հայաստանում, ապացուցանում են, թէ ի՞նչքան է նա հաւատարիմ մնացել իւր խոստումներին: Մարգկային իրաւանց այդպիսի չորս խախտումն մի սերնգեան կեանքի ընթացքում կատարելապէս հերիք է, ցոյց տալու համար, թէ ի՞նչքան վստահելի են իսլամի որդոց խօսքերն ու ի՞նչքան ապահով է քրիստոնէից վիճակը կիսալումնի հովանաւորութեան տակ:

Սուլթանը միայն անուանական կերպիւ է փոխել հին օրէնքը, որով մահուան պատիժ է սպառնում իսլամից հրաժարուողին: Տաճիկ տէրութեան սահմաններում ոչ մի մուսուլման չէ կարող քրիստոնէութեան դառնալ: Ամիս չէ անցնում, որ մէկը կենդանիներից ցուցակից չը ջնջուի, միայն նրա համար, որ անզգոց է եղել իւր հակումն ցոյց տալու գէպի քրիստոնէութիւնը, Խոլամից հրաժարուել Տաճկաստանում: Կը նշանակէ պարզապէս մահուան վտանգի ննմարկել իւր անձը, Միւս կողմից պակաս

չն օրինակներ քրիստոնէից ուժով կամ խարելով խպամի գարձնելու։ Սուլթանը իւր բաղմացեղ և միմեանց թշնամի հպատակների համար համաձայնեցնելու մի աւելի յարմար միջոց չեր կարող գրանել, քան թէ մուսուլմանների մոլուռանգութեան և ատելութեան առ քրիստոնեայս դիմելը։

Արդէն կես դար առաջ ընդհանրապէս այն կարծիքն է կազմուել, որ տաճիկ կառավարութիւնն անուղղայ է և անընդունակ որ և է բարենորոգման։ Զուր տեղը նիկողայս և, կայսրը նրան չանուանեց «հիւանդ մարդ»։ Եյդ ժամանակից մի տասնամեակ անգամ չէ անցել, որ այդ կարծիքը չը հաստառուէր։ Տաճկաստանի բոլոր նորագոյն պատմութիւնը քայլայման ու սարսափների պատմութիւնն է։ Ամէնքը գեռ յիշում են 1860 թուականի արիւնչեղութիւնները Լիբանանում, որ առիթ տուաւ եւրոպական տէրութեանց միջամտութեան և անմնդ քրիստոնէից պաշտպանութեան։ Ապա յաջորդեցին գաղանութիւնները Բոլղարիայում, որի հետևակին եղաւ այդ երկրի հանուիլը «հիւանդ մարդու» ծանր լուծի տակից, Նդիպտական խառնակութիւնները, որ նոյնպէս քրիստոնէից կոտորած էին սպառնում, խափանուեցան Անգլիայի հաստատամութեան շնորհիւ և առաջ բերին այդ երկրի իրական ազատութիւննը տաճիկ լծից, Անգլապէս տաճիկների Հայաստանում գործած վերջին գաղանութիւնները նորից ապացուցեցին, որ Տաճկաստանը ցարդ շարունակ նոյն անկարդ տէրութիւնն է մնացել, որպիսին էր մի դար առաջ։

Խրիմի պատերազմից յետոյ քառասուն տարուան ընթացքում տաճիկները ոչ միայն ոչ մի քայլ չարին իրենց երկրում իրաւունք և արդարութիւնն հաստատելու համար, այլ զանազան նենգութեանց և խարերայութեանց շնորհիւ այն տեղն հասան, որ բոլորովին ջնջեցին քրիստոնէից ունեցած նախիին իրաւունքներն իսկ, Անգլին օ տարիների ընթացքում և. Պոլսից արձակուած բոլոր կարգադրութիւններ կատարեալ (Ճայուած) հալածակիներ էին քրիստոնէից դէմ Դաշնիքների համաձայն քրիստոնէից իրաւունք և տրուած եկեղեցիք շնորհու, զպոցներ բանալու, գրքեր տպելու և տարածելու։ Քայլ այժմ կարելի չէ ոչ եկեղեցի շնորհու, ոչ նոյն իսկ ամենափրիկ մի դարոց բանալ առանց սուլթանի յատուկ թոյլտուութեան, իսկ սուլթանի և ժողովրդի միջն մի անահանելի պատմական աշխարհութիւնների մեջ եւզարդուած է կառավարութիւնը և արիւնչեղութիւնների։ Պարզ է, որ քանի գեռ զոյտութիւն կունենան այդ անընական յարաբերութիւններ, այն ժամանակ մի քրիստոնէակ կառավարութիւնները և բնչու գրանք անսպաս աղբիւր են մշտական խոռոչութիւնների և արիւնչեղութիւնների։ Պարզ է, որ քանի գեռ զոյտութիւն կունենան այդ անընական յարաբերութիւններ, այն քան ժամանակ էլ քրիստոնէակ կը տանջուին և դրանց և տաճկաց մէջ եղած թշնամութիւննը պիտի աղբիւր իմնի արիւնչեղ ընդհարութների, սր մեր դարու խայտառակութիւններն են կազմում։ «Ճիւանդ մարդը» անրուժելի հիւանդութիւն ունի և այդ հիւանդութիւնը իսլամն է, որ հենց իւր զոյտութեամբ իսկ անհաշտելի է քրիստոնէայ քաղաքակիրթութեան հետ, որ հիմնաբարն է նորագոյն թէ տէրութիւններին և թէ միջազգային իրաւունքների։

իզուր է. Ամերակա Տաճկաստանում և ոչ մի տեղ կարելի չէ գիրը տպել առանց նախապէս թոյլտուութիւն ստանալու և. Պոլսի գրաքննիչից, իսկ այդ տաճկական գրաքննութիւնը վաղուց արդէն տակ է գարձել բոլոր քաղաքակիրթ աշխարհում—իւր յիմար և անմիտ անհամբերութեամբ։ Բանն երբեմն այն տեղն էր համեսմաւ որ նոյն իսկ ս. գրքերը ուղղագրուելուց վայրենի խանգարու մներից մոլեւ անգ ու ջերմեսանդ թուրքը գրաքննիչներից միայն տարագրելու թոյլտուութիւն էր առացում։ Դեռ նորերս արգիլուած էր յայտնի կերպով քրիստոնէառ թէրութիւնը քարոզելը, իսկ մինչգեռ տէրութեան բուլոր քայլայման ամէն օր տասն հազարաւոր մլէմնիմներում հայ հոյուում և անիծուում է քրիստոնի հաւատոր։ Բայց վայ այն քրիստոնէին, որ կուղենայ նոյն գրամազ հաստուցանել մուսուլմանին։ Վայգիսի բողոքների հիւանդանիները շատ սարուափելի են, իսկ գատապարտել մի քրիստոնէայ Մահմէտի և նրա մարգարէ—սուլթանի մեծութիւնը վիրաւորելու համար այնքան հեշտ է, որ մուսուլմաններն անընդհատ մատնութիւններ են անում քրիստոնէից զրայ, մեղադրում են նրանց այդ յանցանքների մէջ և տաճիկ գատարանը կարեսը չէ համարում քննել այգիսի մատնութիւնները, գերազասելով պատժել «շուն-քրիստոնէաններին»։ Վայգիսի դիպուածներում քրիստոնէայի համար միակ վրը կութիւնը փող վճարելն է, և այդ միջոցը յիրաւի օգնում է և տանիիլ է կացուցանում քրիստոնէից կեանքը։ Զուր չէ որ տաճկաց մի քրիստոնէայ բարձրասիման տաճկաստանում տաճիկութիւններ կատարեալ իրենց երերու հիւանդութիւնները և նման գրանք անսպաս աղբիւր են մշտական խոռոչութիւնների և արիւնչեղութիւնների։ Պարզ է, որ քանի գեռ զոյտութիւն կունենան այդ անընական յարաբերութիւններ, այն քան ժամանակ էլ քրիստոնէակ կը տանջուին և դրանց և տաճկաց մէջ եղած թշնամութիւննը պիտի աղբիւր իմնի արիւնչեղ ընդհարութների, սր մեր դարու խայտառակութիւններն են կազմում։ «Ճիւանդ մարդը» անրուժելի հիւանդութիւն ունի և այդ հիւանդութիւնը իսլամն է, որ հենց իւր զոյտութեամբ իսկ անհաշտելի է քրիստոնէայ քաղաքակիրթութեան հետ, որ հիմնաբարն է նորագոյն թէ տէրութիւններին և թէ միջազգային իրաւունքների։